**«Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ» ծրագրի շրջանակներում « Կոտայքի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող միջոցառումների վերաբերյալ**

**(հունվար-հունիս 2026թ.)**

## 1. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի (ԿԱՊԿ, ԿՁԱՊԿ) գնահատում

2026թ. առաջին կիսամյակում պլանավորված էր իրականացնել ընդհանուր թվով 160 ԿԱՊԿ և ԿՁԱՊԿ գնահատում, սակայն իրականացվել է 197-ը՝ գնահատման հայտերի մեծ թվով պայմանավորված: Գնահատումներն իրականացվել են 57 դպրոցում, 9 ՆՈՒՀ-ում, 2 ՄԿՈՒ-ում և Կոտայքի ՏՄԱԿ-ում:

Առաջին անգամ գնահատվել է 0-6 տարեկան թվով 27 սան, որից 24-ը՝ տղա, 3-ը՝ աղջիկ: Հերթական գնահատում չի իրականացվել:

Առաջին անգամ գնահատվել է 6-18 տարեկան՝ 102 աշակերտ և ուսանող, որից 68-ը՝ տղա, 34-ը՝ աղջիկ: Հերթական անգամ գնահատվել է 68 աշակերտ, որից 50-ը՝ տղա,18-ը՝ աղջիկ:

Ընդհանուր ԿԱՊԿ գնահատում անցել է 55 աղջիկ, 142 տղա:

Գնահատման գործընթացին զուգահեռ իրականացվել են նաև ԿԱՊԿ և ԿՁԱՊԿ գնահատման խորհրդատվություններ և մշտադիտարկումներ:

## *2. Մանկավարժահոգեբանական ծառայությունների մատուցում*

*2026 թվականի հունվար-հունիս ամիսներին Կոտայքի ՏՄԱԿ-ի կողմից ՄՀ աջակցության ծառայություններ ստացել ընդհանուր 886 սան-աշակերտ- ուսանող: 86 հանրակրթական ուսումնական հաստատություններում մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ է ստացել ԿԱՊԿ ունեցող 799 աշակերտ, 28 ՆՈՒՀ-ում՝ 82 ԿՁԱՊԿ ունեցող սան, 4 ՄԿՈՒ -ում՝ 5 ուսանող: Կոտայքի ՏՄԱԿ-ում ՄՀ աջակցություն ստանում է 9 երեխա, ովքեր ԿԱՊԿ գնահատում անցել են ՏՄԱԿ_ում, ըստ կարգի կիաճախեն ՆՈՒՀ-եր: Ընդհանուր՝ 3-6 տարեկան 82 երեխա ստանում է ՄՀ աջակցության ծառայություններ:*




*ՄՅ աջակցության ծառայություններ ստացող սան-երեխա -ուսանող թիվը ՝ ըստ սեռի բաժանվում է հետևյալ հարաբերակցությամբ՝*




*Միայն դպրոցի մասնագիտական թիմի կողմից ՄՅ աջակցության ծառայություններ ստանում է 77 աշակերտ, իսկ ՆՈՒՅ-երում՝ 10 սան: Դպրոցից դուրս մնացած 1 աշակերտ բացահայտվել է և հաճախում է դպրոց:*

*Առանց ԿԱՊԿ գնահատման՝ մասնագետի օրագրի հիման վրա Կոտայք ՏՄԱԿ-ի բազմամասնագիտական թիմը ծառայություններ է մատուցում նաև 20-ից ավել աշակերտի՝ ըստ կարիքի և անհրաժեշտության:*




Աշակերտների մոտ առաջացած դժվարությունների և խնդիրների հաղթահարման նպատակով ՏՄԱԿ-ի մասնագետները կատարել են բազմաթիվ դիտարկումներ՝ ըստ անհրաժեշտության կատարել շտկողական աշխատանքներ: Հունվար-հունիս ամիսներին ՄՀ աջակցության բաժնի աշխատակիցներն իրականացրել են նաև մշտադիտարկումներ, խորհրդատվություններ՝ ՆՈՒՀ-երում և դպրոցներում:

### 3. Կարողությունների զարգացում/ վերապատրաստումներ

2026 թվականի ընթացքում Կոտայքի ՏՄԱԿ-ի վերապատրաստման և մեթոդական աջակցության բաժնի կողմից իրականացվել են մի շարք աշխատանքներ՝ հետևյալ ուղղություններով՝

· վերապատրաստումներ

· խորհրդատվություններ,

· մշտադիտարկումներ,

· բովանդակային մշակումներ:

Իրականացվել են մասնագիտական կարողությունների զարգացմանն ուղղված 132 վերապատրաստման դասընթաց՝ մարզի 4 ՄԿՈՒ հաստատություններում, 101 դպրոցներում և 38 ՆՈՒՀ-երում ՄՀ աջակցության ծառայություններ տրամադրող, ինչպես նաև հանրակրթական ուսումնական հաստատություններում 1886 մանկավարժական աշխատող հանդիսացող մասնագետների, ուսանողների, աշակերտների ինչպես նաև ծնողների համար:

Դասընթացներն իրականացվել են առկա ձևաչափով:

Մասնակիցների թիվն ըստ վերապատրաստման թեմաների

| | Վերապատրաստման թեմա | Մասնակիցների թիվ |
|---|---|---|
| 1. | «Աուտիզմ ունեցող երեխաների առանձնահատկությունները և ցուցաբերվող մանկավարժահոգեբանական մոտեցումների ռազմավարությունը» | 33 |
| 2. | «Խոսքային խանգարումները ՆԴ տարիքում» | 90 |
| 3. | «Օգնենք մանկիկին խոսել» | 10 |
| 4. | «Գիտակից աշակերտ, նվիրվող ուսուցիչ» | 152 |
| 5. | «Վարքային խանգարում ունեցող երեխաների առանձնահատկությունները և նրանց հետ տարվող մանկավարժահոգեբանական աշխատանքներն ու մոտեցումները» | 131 |
| 6. | «Մասնագիտական այրում. Հաղթահարման ուղիներ» | 58 |
| 7. | «Ուսումնական հաստատություններում երեխաների պաշտպանության, հոգեսոցիալական աջակցության և հոգեկան առողջության դեպքերի արձագանքման և ուղղորդման մեխանիզմներ» | 284 |
| 8. | «Արդյունավետ ծնողավարում» | 135 |
| 9. | «Կրթության և զարգացման կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները» | 70 |
| 10. | «Բուլինգի ճանաչում. Հաղթահարման ուղիներ» | 80 |

| | | |
|---|---|---|
| 11. | «Առողջ ինքնագնահատական» | 91 |
| 12. | «Կրթության աջակցող միջոցներ՝ մատչելիություն և խելամիտ հարմարեցումներ» | 569 |
| 13. | «Երեխաների հանդեպ բռնության կանխարգելում և արձագանքում» | 17 |
| 14. | «Ուսուցչի օգնականի գործառույթները» | 53 |
| 15. | «Կրտսեր դպրոցականի մոտիվացիայի և ուսումնական ունակությունների առանձնահատկությունները. զարգացման արդյունավետ ռազմավարությունները» | 11 |
| 16. | «ԱՈՒՊ» | 65 |
| 17. | «Կոնֆլիկտը դպրոցում» | 37 |

Մանկավարժական աշխատողների կարողությունների զարգացմանն ուղղված վերապատրաստման դասընթացների մասնակիցների թիվն աղյուսակի տեսքով՝

| Վարչական | Մասնագետ | Դասախոս | Ուսանող | Ուսուցիչ | Ուսուցչի օգնական | Դաստիարակի օգնական | Դաստիարակ | Աշակերտ | Ծնող | Այլ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 409 | 193 | 0 | 71 | 423 | 182 | 10 | 315 | 159 | 123 | 1 |

## 4. Խորհրդատվություն

Կենտրոնի կողմից 2026թ. Հունվար-հունիս ամիսների ընթացքում տրամադրվել են խորհրդատվություններ 131 նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում թվով 1122 խորհրդատվություն, որին մասնակցել են շուրջ 2879 մանկավարժական (մանկավարժներ, ուսուցչի օգնականներ, աջակցող մասնագետներ) և վարչական աշխատողներին, ինչպես նաև աշակերտներին և ծնողներին:

Խորհրդատվությունները տրամադրվել են հետևյալ ուղղություններով՝

· Անհատական ուսուցման պլան

· Անհատական ուսուցման և զարգացման պլան

· Ծնողավարման հիմունքներ

· Մասնագիտական ինքնորոշում

· Մասնագիտական կարողությունների զարգացում

· Ուսումնամեթոդական աջակցություն

· ՄՅ աջակցության ծառայությունների տրամադրում

· Ինչպես հաստատել դրական փոխհարաբերություններ դասարանում

· Դեռահասության ճգնաժամ, հաղթահարման ելքեր

· Ինչպես հաղթահարել ներանձնային կոնֆլիկտները

· Ռեսուրս սենյակի կաhավորում

· Ուսումնամեթոդական նյութերի մշակում

· ԿԱՊԿ գնահատում

· Կոնֆլիկտը դպրոցում

.Վարքային խանգարում

| Վարչական | Մասնագետ | Դասախոս | Ուսանող | Ուսուցիչ | Ուսուցչի օգնական | Դաստիարակի օգնական | Դաստիարակ | Աշակերտ | Ծնող | Այլ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 375 | 474 | 1 | 0 | 465 | 568 | 4 | 55 | 30 | 813 | 11 |

### *5. Մշտադիտարկում*

*2026 թվականի հունվար-մարտ ամիսների ընթացքում կենտրոնի կողմից իրականացվել են ուսումնական գործընթացի և միջավայրային հարմարեցումների, ծնող-ուսուցիչ-դպրոց, ծնող-դաստիարակ-ՆՈՒՀ համագործակցությանն ուղղված 124 մշտադիտարկում: Մշտադիտարկումներն իրականացվել են դպրոցներում՝ 75-ը և ՆՈՒՀ-երում՝ 44-ը, ՄԿՈՒ՝ 5-ը:*

### *6. Համագործակցություն*

*ՏՄԱԿ-ն ակտիվ համագործակցել է մարզի համայնքապետարանի հետ՝ իրականացնելով ՆՈՒՀ-երում կարգում փոփոխություններին ուղղված աշխատանքներ: ՏՄԱԿ-ի աջակցության բաժնի հոգեբաններն ակտիվ համագործակցել են դպրոցների հետ՝ կազմակերպելով բաց-դաս միջոցառումներ, արտթերապևտիկ աշխատանքներ՝ բնականոն զարգացում ունեցող երեխաների հետ:*

**Կենտրոնի անվանումը՝** **«Կոտայքի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ**

**Տնօրենի պ/կ՝** ____________________ **Գայանե Պետրոսյան**

*(ստորագրություն)* *(անուն, ազգանուն)*

«01 » «07» 2026թ.